ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«18» 12 2018թ. N: 318 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱԽՈՒՐԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 143-Ն հրամանի 177-րդ կետի պահանջներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Մուշեղ Մուրադյանին և գլխավոր մասնագետ Արտակ Հայրապետյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացնել համապատասխանության աուդիտ:
2. Աուդիտ իրականացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչուհի Սիլվա Օհանյանի դիմումում բարձրացված հարցերի շրջանակում:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Մ. Մուրադյանին՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքները իրականացնել 2018թ. դեկտեմբերի 18-ից, 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Կ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝